ռավարիչը՝ այս պանդուխտներուն ո՛չ կը թողու որ իրենց տեղերը երթան, ո՛չ ալ կը թողու որ արտասահման իրենց ազգականներուն քով երթան։ Կ. Պոլսէն գէպ ի իրենց երկիրը, Տիգրանակերտ աքսորեալ երկու ընտանիքներ Պօտուրում, ոճրագործներուն մէջ նետել տուած է։

Տեղույն առաջնորդական փոխանորդին միջամտութիւնը ո՛ և է արդիւնք չէ ունեցած, ու անոնք չկրնալով մինչև իրենց տեղը հասնելը ուտելիք տալու համար հարկաւոր ծախսը մէջտեղ չեն բերած, մեծ թշուառութեան մէջ կը գտնուին։ Նշանաւոր Սրբազանները թուրք պաշտօնեաներուն ձեռքէն չքաշածնին չէ՞ մնացեր»:

«Լ'Արմէնի»

# ԲՐՕ ԱՐՄԷՆԻԱ
## (Pro Arménia)

Ստացանք «Բրօ Արմէնիա»ի երրորդ թիւը հետևեալ բովանդակութեամբ։

Մեր ընթերցողներուն.—ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ։ Կիսամսեակ.—Բ. ԿԻՑԵԱՌ։ Նամակներ Տիգրանակերտէն ու Սասունէն։ Բիւրաեր ու Սուլթանը.—Թ.։ Արևելքէն լուրեր.—Բ. Կ.։ Թղթեր. Ուրֆայի կոտորածին տեղեկագիրը (Կապոյտ Գիրքէն արտատպուած).—ՖԷՅՄՈՐԻՍ։

Այս թիւն ալ առջի երկու թիւերուն նման խիստ շահեկան ու հետաքրքրական պարունակութիւն մ'ունի։ Հայուն վշտին թարգման է ան, ու անոր հոգւոյն հետ կը խօսի։

Ամէն Հայու բարոյական պարտականութիւնն է քաջալերել զայն ու մեծ զոհողութիւն մը չպահանջեր՝ անիկա Տարեկան բաժնեգինն է 10 ֆրանք։

Դիմել առ.

Mr PIERRE QUILLARD
10, Rue Nollet,
Paris

# ԼՐԱՔԱՂ

«Լ'Արմէնի»ի Պոլսոյ թղթակիցը հետևեալը կը հաղորդէ յիշեալ թերթի տնօրէնին։

«Ցաւօք սրտի կ'իմացնեմ ձեր հօրեղբօր մահը, որ գեկտ. 2ին իր մահկանացուն կնքեց ի Բերա։

Մահազդներ չցրուեցան, հաւանականաբար, որովհետև ձեր ընտանեաց ազգանունը յիշելը, ապստամբութեան պէս բան մը նկատուած է թուրք պաշտօնէութեան կողմէն։ — Ցաւօք սրտի կը յիշատակեմ նոյնպէս, տաղանդաւոր երգչուհի՝ Տիկին Այվազեանի, և, Սարգիս էֆէնտի Համամճեանի մահը։

—Նշանաւոր հայ վիպասանուհի, Տիկին Տիւսաբ հիւանդ է. խիստ ծանր վիճակ մունի ու ազատելու յոյս չկայ։ —Մեծ գրագէտ, Ե. Տէմիրճիպաշեան երեք ամիսէ ի վեր հիւանդ պառկած է Ազգային Հիւանդանոցին մէջ, որուն հիւանդութիւնը նմանապէս շատ ծանր է և չափազանց յոգնութեան արգիւնք կ'ըսուի։»

# ԱԶԴ

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը գոհացում տալու և մեր ընթերցողներու գիւրութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետև մեր թերթը հասոյ պիտի ծախուի Շարա Ապտ-էլ-Ազիզի «կիզք» Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՑԵԱՆԻ խանութը ինչպէս նաև Գլոտ-Պէյ փողոցի ծայրը և թերթավաճառներու կայարանին մօտ ծխավաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍԱՊԵԱՆԻ քով։

# Ա Զ Դ

Կը ծախուի Տ. Կ. Երզնկացեանի խանութը ի Շարա Ապտ-էլ-Ազիզ։

## ՕՐԱՑՈՅՑ
## ՊԱՐԶ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ
## 1901 ՏԱՐՒՈՅ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ս. ՓՐԿՉԻ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑ
ՊԱՐԶ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Շրջակայ գիւղերէն եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին։ Դիմել վերոյիշեալ հասցէին։

Le Gérant J. MUNIER

Տպ. «Միութիւն». — Թ. Ս. Փափազեան

# ՊԱՆԳ ԼԻՕՆԷԶ
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ
## Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիօնի հանրածանօթ դրամատունը, այս անգամ ունեցաւ իր Եգիպտոսի գործակալն ալ, Տ. Մկրտիչ Սօսօյեան, որ իր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վստահութիւնը կը վայելէ։

Այս գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիօնի քաղաքապետութենէն պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիօնէզի միջոցաւ ամէն տեսակ դրամական և Քրէտի Ֆօնսիյէի, Վիլ տը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, գանձումներ։ Ամսական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պահեստի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած։

Փափաքողները հաճին դիմել Նիւպարի վրայ փաստաբան Թարթարիի գրասենեակը։

Թղթակցութիւն և կամ դրամ ղրկել հետևեալ հասցէին.

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ
Ի ԳԱՀԻՐԷ

# ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
## Պ. ՆԻԿՈԴԻՄՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պօրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գասիկինը։

Կը բժշկէ բերնի և ակռայի ամէն տեսակ հիւանդութիւնները։ Ազգասէրը ձրի կը դարմանէ ամէն օր, առաւօտեան ժամը 8էն 9։

# ՊԷԼԱԵԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.
## ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ
### ԱՐԱՆՑ ԵՒ ԿԻՆԱՆՑ
### ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ատէնիի մեծ պողոտային վրայ Տալիրայի Սանիյէի դիմացը, Ռաֆիկին ելեկտրական գործիներու վաճառատունը։

Վերջերս Ամերիկայէն հոս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդէն հասարակութեան թէ՝ պատրաստ ենք գոհացնել մեր գիմող Պատ. յաճախորդները, գործի մաքրութեան, գիներու չափաւորութեան և ճշդապահութեան կողմէն։

Մեր գործատեղւոյն մէջ կ'աւանդուին նաև ձևագիտութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մեթոտով,

Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին։

# ՃԱՇԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
## ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԴԱԶԱՆՃԵԱՆ
Շարա Ապտ-Սապահ
Նիւպ-Տէնվերսեյ դեղարանին դիմացը.

Օդասուն ու լուսաւոր գիրք. մաքուր ու վայելուչ սպաս. համեղ ու ախորժաբեր կերակուրներու զանազանութիւն, անխարդախ պատրաստութիւն. նոր ճաշացուցակ մը գիւրամատչելի գիներով առնա՛ Գաղանճեան եղբարց ճաշարանը։

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի գառնայ հայկական ճաշարանին։

# ՏՊԱՐԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
## Ի ԳԱՀԻՐԷ
ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

## ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
## ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Այս նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամէն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետոմսեր, մահազդեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակագլուխներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն.։

Յանձնարարութիւնները կը կատարուին փութով, ամենայն խնամով եւ ճաշակաւոր տպագրութեամբ:

ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ